

Երիտասարդ կանանց հզորացում

Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը

պատիվ ունի հայտարարելու, որ վերջերս սկսվել է *Երիտասարդ կանանց հզորացում* ծրագիրը, որը նպաստելու է երիտասարդ կանանց ակտիվ մասնակցությանը համայնքի և երկրի քաղաքական և հասարակական գործընթացներին և ուժեղացնելու է *Ակտիվ կանանց ցանցը*:

Ծրագրի թիրախային խմբերն են 17-25 տարեկան անապահով ընտանիքների երիտասարդ կանայք, որոնք ապրում են Հայաստանի փոքր քաղաքային համայնքներում, նրանց ընտանիքները, *Ակտիվ կանանց ցանցը*, ինչպես նաև նշված համայնքները:

Ծրագրի հիմնական գործունեությունը հիմնված է համալիր դասընթացների սխեմայի վրա, որը բաղկացած է.

1. Ուսումնամարզումներ թիրախ խմբերի համար
2. Վերապատրաստողների վերապատրաստում հատուկ մշակված չափանիշներով ընտրվածների համար, ովքեր հետագայում որպես վերապատրաստոններ պետք է դասավանդեն այլ փոքր քաղաքային համայնքներում բնակվող աղջիկներին: Ուսումնամարզումները թույլ կտան երիտասարդ կանանց զարգացնել իրենց անհատական առաջնորդական կարողությունները և բարելավել նրանց

անձնական հմտությունները: Ուսումնամարզումների շեշտը դրվում է ուսումնական գործընթացի չորս հիմկան ասպեկտների վրա՝ գիտելիք, հմտություններ, տեսակետներ և արժեքներ:

Ավելի խորը գիտելիքներ և հմտություններ ուսուցանվողները կստանան հետևյալ թեմաներով՝ Քաղաքացիական հասարակության հայեցակարգ, Գենդերի ներածություն, Անձնական առաջնորդություն, Թիմի կառուցում/Աշխատանքային էթիկա, Մարդու իրավունքներ, ՀԿ կառավարում:

Առաջնորդության հմտություններից բացի՝ ծրագիրը կնպաստի նաև երիտասարդ կանանց ցանցի հզորացմանը, որը իր հերթին կծառայի համայնքի զարգացմանը: Կանցկացվեն նաև փոխադարձ նպատակային այցեր, ինչը թույլ կտա տարբեր համայնքների մասնակիցներին և ցանցի անդամներին փոխանակել ստացած տեղեկատվությունը և փորձառությունը:

Նպատակները և խնդիրները

Ծրագրի քննհանուր հեռահար նպատակն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության հաստատմանը քաղաքացիական կրթության միջոցով, նվազեցնել թրաֆիկինգի մակարդակը երիտասարդ կանանց շրջանում, ինտեգրելով նրանց հասարակության մեջ:

Ծրագրի հատուկ նպատակն է նպաստել երիտասարդ կանանց ներգրավմանը հասարակական կյանքում և աջակցել

նրանց դառնալ երկրի ակտիվ անհատ/քաղաքացիներ:

Որպես ծրագրի վերջնական արդյունք՝ շահառուները զինված անհարաժեշտ գիտելիքներով և հմտություններով ակտիվորեն կմասնակցեն համայնքի գործընթացներին: Տեղական համայնքը իր հերթին կստանա ավելի ակտիվ և հմուտ երիտասարդ կանանց, ինչը էականորեն կնպաստի համայնքի զարգացմանը: Այսպիսով, ծրագրի շահառուները ոչ միայն Հայաստանի կանայք են, այլև ամբողջ բնակչությունը, քանի որ փոքր քաղաքային համայնքներում կանանց վիճակի բարելավումը կբերի Հայաստանի կանանց վիճակի բարելավմանը ընդհանուր առմամբ:

Հիմնավորում

Մեր հետազոտությունը բացահայտեց, որ 17-25 տարեկան երիտասարդ կանանց մեծ մասը ներգրավված չէ հանրային կյանքում և/կամ որևէ օգտակար սոցիալական գործընթացներում: Իրավիճակը ավելի օրհասական է փոքր քաղաքային համայնքներում, քանի որ մարզկենտրոնների սոցիալական, մշակութային և քաղաքական կազմակերպությունները որոշ դեպքերում կարևոր տեղ ունեն համայնքային կյանքում: Երիտասարդ կանանց մեկուսացումը բերում է նրանց անբավարար մասնակցությանը հասարակական կյանքին, փոխարենը, որպես այս իրադրության արդյունք, երիտասարդ

կանայք սկսում են ոչ ադեկվատ զգալ իրենց միջավայրում և ունենում են ցածր ինքնագնահատական, որն էլ բերում է նրանց մեկուսացման խորացմանը:

Ծրագրի ակնկալվող արդյունքն է փոքր քաղաքային համայնքներում ապրող երիտասարդ կանանց վիճակի բարելավումը, որը կբերի Հայաստանում կանանց վիճակի ընդհանուր բարեկավմանը:

ՔՀԶԿ-ն կարևորում է երիտասարդ կանանց հզորացմանը, քանի որ նրանց ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքում կենսական նշանակություն կարող է ունենալ հասարակության հետագա զարգացման գործում:



Երիտասարդ կանանց հզորացում

Այս ծրագիրը իրագործվել է Հայաստանում
Եվրոպական Միության ֆինանսական
աջակցության շնորհիվ



*ՔՀԶԿ-ն պատրաստ է կապեր
հաստատելու և համագործակցելու
տեղական և միջազգային շահագրգիռ
կազմակերպությունների հետ*

Փոստային հասցեն. Նալբանդյան 49, #9
0025 Երևան, Հայաստան
Գրասենյակի հասցեն. Աղայան 15, # 17
0009 Երևան, Հայաստան
Հեռ. (374-10) 560 544
Ֆաքս. (374-10) 585 677
Էլ.-փոստ. info@cdcs.am
Website: <http://www.cdcs.am>

